Արձանագրություն №5
գնահատող հանձնաժողովի նիստի

1. Տվյալներ պատվիրատուի, ընթացակարգի (ծածկագիր), ապրանքների, աշխատանքների, ծառայությունների ձեռք բերման, նիստի անցկացման մասին	
Պատվիրատու	*<<ՀԱԷԿ>> ՓԲԸ*
Գտնվելու վայրը	*ՀՀ Արմավիրի մարզ, ք.Մեծամոր*
Ընթացակարգի ծածկագիրը	*<<ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-87/19>>*
Ձեռք բերվող ապրանքի, աշխատանքի, ծառայության անվանումը	*Տվիչներ*
Նիստի անցկացման վայրը	*ք.Մեծամոր, <<ՀԱԷԿ>> ՓԲԸ վարչական շենք*
Նիստի անցկացման օրը և ժամը	*14.06.2019թ ժամը 14:00*
Նիստի անցկացման նպատակը	*1-ին տեղ զբաղեցրած մասնակցի կողմից ներկայացված որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերի գնահատում*
2. Տվյալներ նիստին ներկա հանձնաժողովի կազմի, մասնակիցների կամ նրանց կողմից լիազորված ներկայացուցիչների մասին	
Հանձնաժողովի նախագահ	*ԳՄԾ պետ Հ.Գևորգյան*
Հանձնաժողովի անդամներ	*ՋԱՀԱ լաբորատորիայի վարիչ Ն. Առաքելով*
	ՋԱՀԱ ավագ վարպետ Ռ.Ներսիսյան
	ԳԲ մասնագետ Վ. Պետրոսյան
	ԳԲ առաջատար ճարտարագետ Ա. Ղազարյան
Քարտուղար	*Ն. Հակոբյան*

3. Տեղեկություններ առաջին տեղ զբաղեցրած մասնակցի կողմից որակավորումն հիմնավորող փաստաթղթերի գնահատման մասին

Փաստաթղթի անվանումը	Մասնակցի անվանումը	Փաստաթղթի առկայությունը	Գնահատվել է (բավարար/անբավարար (նշել պատճառը))
Առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագիր	*<<Արմատ-Գրուպ>> ՍՊԸ և <<<<ՈՒԱՄ>> ՆՊՊ>> ՍՊԸ կոնսորցիում*	*առկա է*	*Անբավարար (Հավելված 6.1-ում լրացված չէ հրավերով պահանջվող <<Ապրանքային նշանը>> դաշտը, տեխնիկական բնութագրերը լրացված չեն հայերեն, հրավերով պահանջվող ապրանքների անվտանգության դասը 3Н է, առաջարկվող ապրանքներինը՝ 4Н, բոլոր այն չափաբաժիններում, որտեղ պահանջվում է տվիչ ներդրված բլոկով, նշված չէ ներդրված բլոկի վերաբերյալ տեղեկատվություն, նշված չէ միակցիչի (разъем) տիպը, թիվ 2 չափաբաժնով առաջարկվող ապրանքի սկավառակային փականի շրջադարձի լրիվ անկյունը 360° է, սակայն հրավերով պահանջվում է 90°, հստակ չէ առաջարկվող ապրանքի կոմպլեկտացիան, չկա տեղեկատվություն սնուցման բլոկի առկայության մասին և УП-25 դիրքի ցուցիչ նախատեսված է, թե ոչ, թիվ 3 չափաբաժնով առաջարկվող ապրանքի հրավերի պահանջներին անհամապատասխանությունը պայմանավորված է ֆիզիկական չափերի և կիրառության անհամապատասխանությամբ, քանի որ առաջարկվող տվիչի ջրի մակարդակը չափելու համար նախատեսված զոնդը արտաքին ֆիզիկական տվյալներով կիրառելի չէ օգտագործվող բաքերի համար, թիվ 11-16 չափաբաժիններով պահանջվող ապրանքի համար պարտադիր պահանջ է 36 Վ հաստատուն լարումով աշխատելու հանգամանքը, ինչը առաջարկվող ապրանքների տեխնիկական բնութագրերում նշված չէ, հստակեցնել ինչ են նշանակում К, В3, В հապավումները, թիվ 17, 18, 19 չափաբաժիններով պահանջվող ապրանքների տեխնիկական բնութագրերում պահանջվել է 4ՄՊա թույլատրելի ճնշմամբ տվիչ, առաջարկվող ապրանքներինը 16 ՄՊա է, թիվ 4 և թիվ 6 չափաբաժիններով ապրանքների տեխնիկական բնութագրերը նույնն են ներկայացված,*

			թիվ 4 չափաբաժնով առաջարկվող ապրանքը հավելուրդային և վակուումային ճնշման տվիչ չէ, ինչը պահանջվում էր հրավերով, ներկայացված Հավելված 6.1-ում առաջարկվող ապրանքների տեխնիկական բնութագրերը կարծես թե կազմվել են տեխնիկական վրիպակով, քանի որ թիվ 4 չափաբաժնով առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագիրը համապատասխանում է հրավերի թիվ 5 չափաբաժնով պահանջվող ապրանքի տեխնիկական բնութագրին, թիվ 5-ը 6-ին և այլն...)

Առաջնորդվելով ՀՀ կառավարության թիվ 526-Ն առ 04.05.2017թ որոշման 47-րդ կետի պահանջներով, հանձնաժողովը նիստը կասեցրել էր մեկ աշխատանքային օրով, հնարավորություն տալով <<Արմատ-Գրուպ>> ՍՊԸ և <<<<ՈՒԱՄ>> ՆՊՊ>> ՍՊԸ կոնսորցիումին շտկել արձանագրված անհամապատասխանությունները: Սահմանված ժամկետում կոնսորցիումի կողմից արձանագրված անհամապատասխանությունները չեն շտկվել, սակայն <<Արմատ-Գրուպ>> ՍՊԸ-ի տնօրեն Ա.Ղազարյանը գնահատող հանձնաժողովին գրություն է հասցեագրել, որտեղ նշում է, որ պահանջվող 3-րդ անվտանգության դասի փոխարեն առաջարկվել է 4-րդ դասը, քանի որ արտադրող գործարանի պնդմամբ այդ սարքերը բացարձակապես նույնն են:
Տարբերությունը կայանում է լրացուցիչ փորձարկման և հավաստագրի առկայության մեջ: Փորձարկման և հավաստագրման գործընթացը տևում է 3-6 ամիս: Սերտիֆիկացման դեպքում սարքերի արժեքը կավելանա 50-75 տոկոս: Ա.Ղազարյանը իր նամակում նշել է, որ 3-րդ դասի անվտանգությամբ սարքերի մատակարարումն անհնարին է:
Գնահատող հանձնաժողովը ծանոթացավ ներկայացված գրության բովանդակությանը և առաջնորդվելով ՀՀ կառավարության թիվ 526-Ն առ 04.05.2017թ որոշման 48-րդ կետի 2-րդ ենթակետի պահանջներով մերժեց <<Արմատ-Գրուպ>> ՍՊԸ և <<<<ՈՒԱՄ>> ՆՊՊ>> ՍՊԸ կոնսորցիումի հայտը:
Համաձայն <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, գնահատող հանձնաժողովը որոշեց ընթացակարգի թիվ 1-20 չափաբաժինները հայտարարել չկայացած:

Ընդունվեց որոշում՝ կողմ - 5 , դեմ - 0 :

Հանձնաժողովի նախագահ՝ _____ *Հ.Գևորգյան*

Անդամներ՝ _____ *Ն.Առաքելով*

_____ *Ռ.Ներսիսյան*

_____ *Վ. Պետրոսյան*

_____ *Ա. Ղազարյան*

Համակարգող քարտուղար՝ _____ *Ն.Հակոբյան*